

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

...
**III. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

Հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգում նկարագրված են հաշվապահական հաշվառման վարման հետ կապված հիմնական մոտեցումները: Նրանում բերված են դասերի, հաշիվների խմբերի, առաջին կարգի (սինթետիկ) հաշիվների հակիրճ բնութագրերը, բացահայտված են վերջիններիս կառուցվածքը և նշանակությունը, առավել տարածված գործառնությունների տիպային (ոչ պարտադիր) հաշվապահական թղթակցությունները: Այն գործառնությունները, որոնց հաշվապահական թղթակցությունները սույն բաժնում նախատեսված չեն, կազմակերպությունները դրանց թղթակցությունները կազմում են ինքնուրույն՝ ելնելով ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից և սույն հրահանգից: Հաշվապահական հաշվառման հաշիվների նկարագիրն ըստ բաժինների տրված է հաշվային պլանով նախատեսված հաջորդականությամբ:

ԴԱՍ 9 «ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ»

Այս դասի հաշիվները նախատեսված են կազմակերպությանը չպատկանող, բայց ժամանակավորապես նրա տրամադրության, օգտագործման տակ գտնվող (գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ, պատասխանատու պահպանման, վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքներ, հավատարմագրային պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ, կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ և այլն) ակտիվների, պայմանական ակտիվների և պարտավորությունների, այլ միջոցների և պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 9-րդ՝ «Արտահաշվեկշռային հաշիվներ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 91 «Կազմակերպությանը չպատկանող ակտիվներ», 92 «Բրոքերային և հավատարմագրային կառավարման գործունեության արտահաշվեկշռային հաշիվներ», 93 «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ» և 94 «Այլ միջոցներ և պարտավորություններ»:

Այս դասի հաշիվների հաշվապահական հաշվառումը տարվում է պարզ (միակի գրանցման) համակարգով, բացառությամբ 92 խմբի, որտեղ հաշվառումը տարվում է կրկնակի գրանցման համակարգով:

ԽՈՒՄԲ 91 «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՉՊԱՏԿԱՆՈՂ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ»

91 «Կազմակերպությանը չպատկանող ակտիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 911 «Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ», 912 «Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ», 913 «Վերամշակման ընդունված նյութեր», 914 «Տեղակայման ընդունված սարքավորումներ», 915 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ» և 916 «Որպես գրավ պահվող ակտիվներ»:

Հաշիվ 911 «Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ»

911 «Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ» հաշիվը նախատեսված է վարձակալի կողմից գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցները հաշվառվում են վարձակալական պայմանագրերում նշված արժեքով:

Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնական միջոցների խմբերի, վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 912 «Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ»

912 «Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Այս հաշվում արտացոլվում են՝

-ի պահ ընդունված ապրանքանյութական արժեքները,

-մատակարարներից ապրանքանյութական արժեքների ստացումը, որոնց գծով կազմակերպությունը հրաժարվել է դրանց ստացումից և վճարումից (պայմանագրի պայմաններին անհամապատասխանության պատճառով),

-մատակարարներից ապրանքանյութական արժեքների ստացումը, որոնք պայմանագրով չեն պատվիրված և նախատեսված,

-մատակարարներից չվճարված ապրանքանյութական արժեքների ստացումը, որոնց օգտագործումը հետաձգված է մինչև դրանց դիմաց վճարման կատարումը:

Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքները հաշվառվում են այն գներով, որոնք նախատեսված են ապրանքների ստացման կամ վճարման փաստաթղթերով, պայմանագրերով, ընդունման-հանձնման ակտերով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հաշվարկային գներով:

Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպությունների, ապրանքանյութական արժեքների տեսակների, պահպանման վայրերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 913 «Վերամշակման ընդունված նյութեր»

913 «Վերամշակման ընդունված նյութեր» հաշիվը նախատեսված է պատվիրատուի՝ վերամշակման ընդունված նյութերի, որոնք չեն վճարվել մթերող կազմակերպության կողմից, առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Նյութերը հաշվառվում է պայմանագրերով նախատեսված կամ հաշվարկային գներով:

Նյութերի վերամշակման կամ լրացուցիչ մշակման ծախսերը արտացոլվում են ծախսերի (ծախսումների) հաշվառման հաշիվներում:

Վերամշակման ընդունված նյութերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պատվիրատուների, նյութերի տեսակների, դրանց գտնվելու վայրի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 914 «Տեղակայման ընդունված սարքավորումներ»

914 «Տեղակայման ընդունված սարքավորումներ» հաշիվը նախատեսված է կապալառու կազմակերպությունների կողմից տեղակայման համար պատվիրատուներից ստացված սարքավորումների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այն հաշվառվում է սարքավորումների ստացման փաստաթղթերում նշված գներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հաշվարկային գներով:

Տեղակայման ընդունված սարքավորումների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց տեսակների, պատվիրատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 915 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ»

915 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ» հաշիվը նախատեսված է կազմակերպությունների կողմից կոմիսիայի (հանձնուրդի) և կոնսիգնացիայի (հանձնարարության) պայմանագրերով ընդունված ապրանքների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ապրանքների հաշվառվում է վաճառքի գներով:

Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպությունների, ապրանքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 916 «Որպես գրավ պահվող ակտիվներ»

916 «Որպես գրավ պահվող ակտիվներ» հաշիվը նախատեսված է որպես գրավ պահվող ակտիվների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Որպես գրավ պահվող ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ակտիվների տեսակների, գրավատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

ԽՈՒՄԲ 92 «ԲՐՈՋԵՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ՀԱՇՎՆԵՐ»

92 «Բրոքերային և հավատարմագրային կառավարման գործունեության արտահաշվեկշռային հաշիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ», 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ», 923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ», 924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ», 925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» և 926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»:

Հաշիվ 921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարիչների, բրոքերային գրասենյակների, ֆոնդային բորսաների կողմից հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցների (դրամական միջոցներ, արժեթղթեր) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցները, վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները, վերաչափումից արժեքի նվազումը:

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9211 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող դրամական միջոցներ», 9212 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր»:

Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), միջոցների տեսակների, արժեթղթերը թողարկողների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների արտացոլում	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ստացված միջոցների վերադասակարգում	922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
3. Հիմնադրի միջոցներից տրամադրված փոխառությունների մարում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի արտացոլում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած

	կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրի համար փոխառությունների ստացում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Հիմնադրի արժեթղթերի վաճառքից ստացված դրամական միջոցների արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
7. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ընդունված միջոցների վերաչափումից արժեքի աճի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

**921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»
հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների հետ վերադարձ	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների վերադասակարգում	922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
3. Հիմնադրի միջոցներից տրամադրված փոխառությունների արտացոլում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրի համար ստացված փոխառությունների մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Վաճառված՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների արժեքի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
7. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների վերաչափումից արժեքի նվազման արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Հաշիվ 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ» հաշիվը նախատեսված է կոմիսիայի (հանձնուրդի) և կոնսիգնացիայի (հանձնարարության) պայմանագրերի համաձայն ստացված դրամական միջոցների և արժեթղթերի, ինչպես նաև դրանց ներդրումից և իրացումից ստացված

դրամական միջոցների ու արժեթղթերի և առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերով ստացված միջոցները, իսկ կրեդիտում՝ դրանց հետ վերադարձը, վաճառքը:

922 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ» հաշիվն կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9221 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն արժեթղթերում ներդրումներ կատարելու համար դրամական միջոցներ», 9222 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված արժեթղթեր», 9223 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթեր», 9224 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված (ձեռք բերված) արժեթղթերի իրացումից դրամական միջոցներ»:

Կոմիսիայի (հանձնուրդի) և կոնսիզնացիայի (հանձնարարության) պայմանագրերով ստացված միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հաճախորդների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

922 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների արտացոլում	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Հավատարմագրային պայմանագրի համաձայն ստացված միջոցների վերադասակարգում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»
3. Հաճախորդի միջոցներից տրամադրված փոխառությունների մարում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի արտացոլում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդի համար փոխառությունների ստացում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Հաճախորդի արժեթղթերի վաճառքից ստացված դրամական միջոցների արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

922 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերով ընդունված միջոցներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների հետ վերադարձ	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

2. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների վերադասակարգում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»
3. Հաճախորդի միջոցներից տրամադրված փոխառությունների արտացոլում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդի համար ստացված փոխառությունների մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Վաճառված՝ կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների արժեքի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Հաշիվ 923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը:

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվն կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9231 «Դեբիտորական պարտքեր արժեթղթերի վաճառքների գծով», 9232 «Դեբիտորական պարտքեր հաշվեգրված տոկոսների գծով», 9233 «Դեբիտորական պարտքեր հայտարարված շահաբաժինների գծով», 9234 «Տրամադրված փոխառություններ»:

Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), դեբիտորների, փոխառուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արժեթղթերի վաճառքի գծով դեբիտորական պարտքի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

2. Հիմնադրին (հաճախորդին) պատկանող արժեթղթերի գծով հաշվեգրված տոկոսների և հայտարարված շահաբաժինների գծով դեբիտորական պարտքերի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
3. Հիմնադրի (հաճախորդի) միջոցներից տրամադրված փոխառությունների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների մարում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

Հաշիվ 924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց հետ վերադարձը:

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9241 «Պարտավորություններ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ստացված միջոցների գծով», 9242 «Պարտավորություններ կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով»:

Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), նրանց կողմից ներդրված միջոցների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

2. Հիմնադրի (հաճախորդի) շահույթների դուրս գրումը	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
--	--

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների հետ վերադարձ	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
2. Հիմնադրի (հաճախորդի) շահույթների դուրս գրումը	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Հաշիվ 925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով հիմնադրի (հաճախորդի) եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, կրեդիտում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով եկամուտները, վնասի դուրս գրումը, իսկ դեբետում՝ ծախսերը, շահույթի դուրս գրումը:

Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունքի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց առաջացման ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների վաճառքից եկամուտների արտացոլում	
ա) դրամական միջոցներով անմիջապես ստացման դեպքում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
բ) դեբիտորական պարտքի ձևավորմամբ	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
2. Հաշվեգրված տոկոսների, հայտարարված շահաբաժինների գծով եկամտի արտացոլում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած

	դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
3. Հավատարմագրային պայմանագրի համաձայն ստացված միջոցների վերաչափումից շահույթների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
4. Հիմնադրի (հաճախորդի) վնասների դուրս գրումը	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» հաշիվը դեբեյրով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների վաճառքի ծախսերի արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
2. Հավատարմագրային պայմանագրի համաձայն ստացված միջոցների վերաչափումից վնասների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
3. Հիմնադրի (հաճախորդի) շահույթների դուրս գրումը	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

Հաշիվ 926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը:

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվն կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9261 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր», 9262 «Ստացված փոխառություններ»:

Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), կրեդիտորների, փոխատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
2. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հիմնադրի (հաճախորդի) համար փոխառությունների ստացում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի մարում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ընդունված միջոցներ»
2. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հիմնադրի (հաճախորդի) համար ստացված փոխառությունների մարում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ընդունված միջոցներ»

ԽՈՒՄԲ 93 «ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐ»

93 «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի հաշիվները՝ 931 «Պայմանական պարտավորություններ» և 932 «Պայմանական ակտիվներ»:

Հաշիվ 931 «Պայմանական պարտավորություններ»

931 «Պայմանական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է պայմանական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանական պարտավորությունների սահմանման և բացահայտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

Պայմանական պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանական պարտավորությունների:

Հաշիվ 932 «Պայմանական ակտիվներ»

931 «Պայմանական ակտիվներ» հաշիվը նախատեսված է պայմանական ակտիվների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանական ակտիվների սահմանման և բացահայտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

Պայմանական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանական ակտիվների:

ԽՈՒՄԲ 94 «ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

94 «Այլ միջոցներ և պարտավորություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր», 942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր», 943 «Չհատուցված հարկային վնաս», 944 «Գրավադրված ակտիվներ», 945 «Խիստ հաշվառման բլանկներ», 946 «Պարբերական և մասնագիտական գրականություն» և 947 «Շահագործման մեջ գտնվող փոքրածեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ»:

Հաշիվ 941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր»

941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր» հաշիվը նախատեսված է հարկային օրենսդրության համաձայն դուրս գրված (հարկային օրենսդրության համաձայն ծախս ճանաչված) դեբիտորական պարտքերի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ յուրաքանչյուր պարտապանի, պարտքերի գոյացման ժամկետի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր»

942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր» հաշիվը նախատեսված է հարկային օրենսդրության համաձայն դուրս գրված (հարկային օրենսդրության համաձայն եկամուտ ճանաչված) կրեդիտորական պարտքերի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ յուրաքանչյուր կրեդիտորի, պարտքերի գոյացման ժամկետի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 943 «Չհատուցված հարկային վնաս»

943 «Չհատուցված հարկային վնաս» հաշիվը նախատեսված է կազմակերպության չհատուցված հարկային վնասի (հաշվետու ժամանակաշրջանում հարկման առումով ճանաչված և հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի հարկվող շահույթի հաշվարկում ներառվող վնաս) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այն կարգավորվում է հարկային օրենսդրությամբ:

Չհատուցված հարկային վնասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առաջացման ժամանակաշրջանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 944 «Գրավադրված ակտիվներ»

944 «Գրավադրված ակտիվներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով գրավադրված ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Գրավադրված ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ գրավադրված ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 945 «Խիստ հաշվառման բլանկներ»

945 «Խիստ հաշվառման բլանկներ» հաշիվը նախատեսված է պահպանության տակ գտնվող և առհաշիվ տրվող խիստ հաշվառման բլանկների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այդպիսի բլանկներից են անդորագրային գրքույկները, հավատարմագրերը, տոմսերը և այլն: Խիստ հաշվառման բլանկներին վերաբերող փաստաթղթերի ցանկը, դրանց պահպանման և օգտագործման կարգը սահմանվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերով:

Խիստ հաշվառման բլանկների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 946 «Պարբերական և մասնագիտական գրականություն»

946 «Պարբերական և մասնագիտական գրականություն» հաշիվը նախատեսված է որպես ծախս ճանաչված և դեռևս օգտագործման մեջ գտնվող պարբերական և մասնագիտական գրականության առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այդպիսի գրականության շարքին են դասվում պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերը, մասնագիտական ամսագրերը, դասագրքերը և այլն:

Պարբերական և մասնագիտական գրականության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ համապատասխան գրականության և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 947 «Շահագործման մեջ գտնվող փոքրաթեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ»

947 «Շահագործման մեջ գտնվող փոքրաթեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ» հաշիվը նախատեսված է շահագործման մեջ գտնվող և որպես ծախս ճանաչված փոքրաթեք հիմնական միջոցների և արագամաշ առարկաների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Շահագործման մեջ գտնվող փոքրաթեք հիմնական միջոցների և արագամաշ առարկաների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց պահպանման տեղի, համասեռ խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների: